ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱՐԱՐԱՏ

726.5(479.25)

«ՎԱՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱՐՑԱԽ

Ա 922 II

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐՈՒՄ

ՎԱՐ

ԵՐԵՎԱՆ - 2007

ՀՏԴ 941(479.25): 72(479.25): 27
ԳՄԴ 63.3(2Հ) + 85.113(2Հ) + 86.3
Ա 360

Գիրքը հրատարկված է ՎԱՉԳԵՆ ԽԱՉԻԿՅԱՆԻ
նախաձեռնությամբ և Հայաստանի երիտասարդ կանանց
ասոցիացիայի նախագահ ԼԻԼԻԹ ԱՍԱՏՐՅԱՆԻ
աջակցությամբ

*Պատրաստված է հրատարակության «ՎԱՐ» մշակութային
նախաձեռնությունների կենտրոնի կողմից*

*Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի կողմից*

ԱԽԹԱԼԱ (Հայաստանի պատմական հուշարձանները).
Ա 360 -Եր.: ՎԱՐ, 2007. -72 էջ:

ԳՄԴ 63.3(2Հ) +
85.113(2Հ) + 86.3

ISBN 978-99941-2-069-7

© «ՎԱՐ» մշակութային նախաձեռնությունների կենտրոն, 2007թ.
© Վ.Ամիրյան, Ա.Թադևոսյան, 2007թ.

Ախթալայի հուշարձանախումբը Հայաստանի միջնադարյան մշակույթում առանձնահատուկ տեղ ունի: Այն հայկական մշակույթի մի յուրօրինակ բաղադրիչի՝ հայ քաղկեդոնական ճարտարապետության ու կերպարվեստի արժեքավոր նմուշներից է: Բարձրարվեստ զարդաքանդակներով ու որմնանկարներով հարուստ այս հուշարձանը անհասկանալի պատճառներով երկար ժամանակ պատշաճ ուշադրության չի արժանացել: Այսօր էլ, երբ օրեցօր աճում է հետաքրքրությունը հայկական մշակութային ժառանգության հանդեպ, Ախթալայի հուշարձանը մի տեսակ անուշադրության է մատնված: Չնայած այն գտնվում է Սանահնի ու Հաղբատի միջնադարյան նշանավոր պատմաճարտարապետական համալիրներից ոչ հեռու, սակայն ըստ հարկի ուշադրության չի արժանանում: Դրա հիմնական պատճառը հուշարձանը ներկայացնող հանրամատչելի տեղեկատվության բացակայությունն է: Բավական է նշել, որ Ախթալայի հուշարձանային համալիրի վերաբերյալ տպագրվել են ընդամենը մի քանի գիտական հոդվածներ, որոնք հասանելի են գլխավորապես մասնագիտական շրջանակներին: Դրանց մի մասը շուրջ հարյուր տարվա վաղեմություն ունի, իսկ մի մասն էլ գրվել է անցած դարի 50-70-ական թվականներին: Տարօրինակ պետք է համարել, որ որմնանկարներով հարուստ այս հուշարձանին նվիրված որևէ գունավոր հրատարկություն չի իրականացվել: Այս գիրքն առաջինն է, որում առկա մասնագիտական հետազոտությունների հիման վրա, հանրամատչելի շարադրանքով ու հարուստ լուսանկարչական նյութի միջոցով, ամբողջական ձևով լայն հանրությանն է ներկայացվում հայ մշակույթի արժեքավոր նմուշներից մեկը՝ Ախթալայի միջնադարյան ամրոցն ու վանական համալիրը:

Ախթալայի ամրոցը և Սբ. Աստվածածին վանքը

Ախթալան գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, պատմական Հայաստանի Գուգարք նահանգի անտառախիտ ու լեռնային տեղանքում: Բնությունն այստեղ առանձնակի հմայք ունի: Թավ անտառները, լերկ ու բարձրաբերձ ժայռերը, լեռնային արագահոս գետերն ու գետակները թույլ են տալիս զգալ վայրի բնության գրավչությունն իր հակասական ներդաշնակության մեջ: Վեր խոյացող մի ժայռեղեն հրվանդանի վրա է կառուցված Ախթալայի միջնադարյան ամրոցն ու Սբ. Աստվածածին վանքը:

Այս տարածաշրջանում մարդը բնակություն է հաստատել շատ վաղ ժամանակներից: Հայտնաբերվել են Ք.ա. III-I հազարամյակի հուշարձաններ: Ախթալայի մերձակա տարածքներից հատկապես հայտնի են ֆրանսիացի հնագետ Ժակ դը Մորգանի հայտնաբերած Ք.ա. VIII-VI դդ. թվագրվող քարարկղային թաղումներով դամբարանները, կավից, բրոնզից ու երկաթից պատրաստված մշակութային արժեքավոր առարկաները:

Գուգարաց աշխարհը կամ Գուգարքը վարչականորեն մասն է կազմել Արարատյան (Ք.ա.IX-VI դդ.), Երվանդունի (Ք.ա.VI-II դդ.), Արտաշեսյան (Ք.ա. II- Ք.հ I դդ.) և Արշակունի (52-428 թթ.) հայկական թագավորությունների: Արտաշեսյանների օրոք այն դարձավ նորահաստատ չորս սահմանապահ կողմնակալություններից՝ բդեշխություններից մեկը: 387 թ. Հայաստանի առաջին բաժանմամբ նահանգը, բացի Տաշիրք գավառից, անցնում է Վիրքին, իսկ 652 թ. հայ-արաբական պայմանագրով նորից վերադարձվում Հայաստանին: IX դ. Հայաստանում անկախ պետականության վերականգնումից հետո Գուգարքը նորից ստանում է հյուսիսային սահմանապահ նահանգի կարգավիճակ:

Որոշ պատմական աղբյուրների վկայությամբ V դարում բնակավայրը կոչվել է *Ագարակ*: XII-XIII դդ. ինչպես արձանագրություններում, այնպես էլ ձեռագիր մատյաններում այն հիշատակվում է *Պղնձահանք* անվանումով: Դրա

Համալիրի տեսքը հյուսիս-արևելքից



պատճառն, անշուշտ, շրջակայքի պղնձով հարուստ հանքավայրերն են: Ներկայիս *Ախթալա* անվանումն առաջին անգամ հանդիպում է 1438 թ. թվագրվող մի թագավորական հրովարտակում: Գոյություն ունի այս տեղանվան առաջացման մի քանի ստուգաբանություն: Ըստ դրանցից մեկի դրա հիմքում ընկած է *աղ թալա՝ սպիտակ բացատ* նշանակող թուրքերեն արտահայտությունը:



Համալիրի հատակագիծը

1. Ամրոցի պարիսպները
2. Ամրոցի մուտքը
3. Սբ. Աստվածածին եկեղեցին
4. Միանավ կից եկեղեցին
5. Կամարակապ սրահը
6. Առանձին կանգնած միանավ եկեղեցին
7. Տնտեսական և այլ շինություններ



Ամրոցի մուտքը ներսից

Ամրոցի ու վանքի հիմնադրման պատմությունը

Ախթալայի պատմաճարտարապետական հուշարձանախումբը ներառում է միջնադարյան ամրոցը և Սբ. Աստվածածին վանքը: Տարածված կարծիքի համաձայն ամրոցի հիմնադրումը կապվում է Բագրատունի իշխանատոհմի կողմից Հայաստանի անկախության վերականգնման հետ: Այս շրջանում կառուցվում և վերակառուցվում են մի շարք ամրոցներ, բերդեր, վանքեր ու եկեղեցիներ: Շինարարական բուռն վերելք է դիտվում նաև Հայոց Բագրատունիներին պատկանող Տաշիրքում: Ենթադրվում է, որ Ախթալայի ամրոցը X դարում հիմնել են Բագրատունի-Կյուրիկյանները: Բագրատունիների այս ճյուղը սերում է Սանահնի ու Հաղբատի վանքերի հովանավորներ Հայոց Աշոտ Գ Բագրատունու (953-977 թթ.) և Խոսրովանույշ թագուհու որդի Գուրգենից: Նրա եղբայրներ Սմբատ Բ Տիեզերակալ (977-990 թթ.) ու Գագիկ Ա Բագրատունի (990-1020 թթ.) հայոց թագավորների օրոք Անիի հայկական թագավորությունը հասավ իր վերելքի բարձրակետին:

Ամրոցի պարիսպներն ու Սբ. Աստվածածին եկեղեցին հյուսիսից



970 թ. դիվանագիտական ու ռազմավարական նպատակով, Աշոտ Գ Բագրատունին Հայաստանի հյուսիսային սահմանագլխում հիմնում է *Տաշիր-Զորագետի թագավորությունը* (970-1113 թթ.), որի թագավոր է հռչակում իր միջնեկ որդի Գուրգենին (972-991 թթ.): Տեղական բարբառով նրա անվան *Կյուրիկե* հնչողության պատճառով էլ նոր արքայական տոհմաճյուղը ստանում է *Կյուրիկյան* անվանումը: Ի դեպ, այս Գուրգենն է իր եղբոր՝ Սմբատի հետ պատկերված Ախթալայից ոչ հեռու գտնվող Սանահնի ու Հաղբատի վանքերի կտիտորական քանդակներում: Սելջուկ-թուրքերի արշավանքների հետևանքով Տաշիր-Զորագետի թագավորության անկումից հետո Կյուրիկյանների ներկայացուցիչները հաստատվում են Տավուշում ու Մաճնաբերդում: Նրանք մի որոշ ժամանակ կապ են պահպանել նաև Ախթալայի ամրոցի հետ և այստեղ եկեղեցի կառուցել: Դրա վկայությունը կարելի է

Սանահնի կտիտորական բարձրաքանդակը ▼

Համալիրի ընդհանուր տեսքը արևելքից

Մարիամ իշխանուհու կանգնեցրած խաչքարը

համարել ամրոցից ոչ հեռու, *Այոր* կոչվող տեղանքում գտնված մի խաչքարի թիկունքին Կյուրիկե Բ-ի դուստր Մարիամ իշխանուհու թողած արձանագրությունը, որում ըստ մասնագիտական մի մեկնաբանության խոսվում է Պղնձահանքում Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցելու մասին: Այս իշխանուհին եկեղեցաշինական գործունեությամբ հայտնի է նաև Հաղբատի վանքից: Նա է 1185 թ. կառուցել գլխավոր եկեղեցու հռչակավոր գավիթը:



ԵՍ ՄԱՐԻԱՄ ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՊՂԸՆՁԱՀԱՆԱՅՍ ՀՈՂՀԱՏԻ ՍԲ ԱԾԱԾԻՆՍ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ԶՄԵՁ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ: ԹՈՒ ՈԼԷ (1188): ԷՐ

Համալիրի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից

Ախթալայի **ամրոցը** Հայաստանի տարածքում համեմատաբար լավ պահպանվածներից է, որին բնորոշ է հայկական ճարտարապետության առանցքային տարրերից մեկը՝ կառույցի և բնական միջավայրի ներդաշնակության սկզբունքի կիրառումը: Այն չափազանց տեսարժան և տպավորիչ տեսք ունի: Ամրոցը, երեք կողմից շրջապատված լինելով ուղղաձիգ ժայռեղեն ձորերով, ունի բնական պաշտպանվածություն: Ժայռերի համեմատաբար անցանելի տեղերն ամրացված են աշտարակավոր բերդապարիսպներով: Ամրոցի գլխավոր մուտքը հյուսիսային կողմից է: Այն ամրացված է զանգվածեղ բերդապարիսպներով և աշտարակներով: Մուտքն ունի հյուսիսից հարավ ձգվող թաղակապ սրահ, որի վերնամասում կառուցված են եղել պահակային և պաշտպանական նշանակության սենյակներ: Հատկապես տպավորիչ է մուտքի արևելյան կողմի հզոր աշտարակը: Մինչև հուշարձանի վերանորոգումը, այն կիսով չափ փլված վիճակում է եղել: Այս

աշտարակը կազմված է հինգ հարկից, որոնցից յուրաքանչյուրի բարձրությունը ներքևից վերև աստիճանաբար պակասել է: Առաջին հարկը գետնափոր է, մնացած չորս հարկերը ներքուստ կամարակապ են: Ամրոցի բերդապարիսպները և աշտարակները շարված են կապտավուն, կոպտատաշ բազալտից՝ շաղախված կրաբետոնով:

Կյուրիկյան ազգատոհմը XII դ. սկզբներին աստիճանաբար թուլանալով կորցնում է իր ազդեցությունը և տիրույթների զգալի մասը:

Ամրոցի մուտքը դրսից



Հուշարձանը հարավ-արևմուտքից

XII դարավերջին հայ իշխանական տների մեջ աստիճանաբար ուժեղանում է Զաքարյանների ազդեցությունը, որոնք էլ հայ-վրացական զինված ուժերի գլուխն անցած ազատագրում են հյուսիսային Հայաստանի տարածքները սելջուկներից: Պղնձահանքը, որպես սեփականություն, անցնում է Զաքարյան եղբայրներից Իվանեին, ում ջանքերով աշխուժանում է վանական կյանքը: Դիվանագիտական նպատակներով եղբայրներից Զաքարեն մնացել է Հայ առաքելական եկեղեցու հպատակ, իսկ Իվանեն՝ ընդունել հունադավանություն (քաղկեդոնություն): Լինելով ազգությամբ հայ և վրաց արքունիքում զբաղեցնելով բարձր պաշտոններ, Զաքարյանները չէին կարող անտեսել վրացիների քաղկեդոնիկ լինելը: Սակայն մյուս կողմից, չէր կարելի անտեսել նաև Հայաստանի բնակչության ու Հայ առաքելական եկեղեցու կողմից ընդունելի լինելու անհրաժեշտությունը:

VII-XIII դդ. քաղկեդոնությունը, հատկապես Վրաստանին սահմանակից շրջաններում տարածում է ստացել նաև հայերի

Հրվանդանի անմատչելի ժայռերը

մեջ: Այս առումով Իվանե Զաքարյանի քայլը լուծել է միանգամից երկու խնդիր՝ վրաց արքունիքի բարեհաճության ամրապնդումը, և հեղինակության ու ազդեցության հաստատումը քաղկեդոնիկ հայերի միջավայրում: Պատահական չէ, որ Ախթալայի վանքը եղել է քաղկեդոնիկ հայերի հոգևոր կենտրոնը:

Ինչ վերաբերում է Ախթալայում վանքի հիմնադրման խնդրին, ապա այսօր էլ դեռևս վեջնականորեն հստակեցված չէ այն հարցը, թե արդյո՞ք Իվանե Զաքարյանն է կառուցել վանքը: Պատմական աղբյուրները, մասնավորապես դեպքերի ժամանակակից Կիրակոս Գանձակեցին հստակ նշում է, որ Իվանեն, վանքը վերցնելով հայերից, այն վերափոխում է վրացականի, այսինքն քաղկեդոնականի:

Ինչպես պատմական աղբյուրները, այնպես էլ Մարիամ իշխանուհու արձանագիր վկայությունը հուշում են, որ մինչև Իվանեի կողմից հունադավանության հաստատումը, այստեղ արդեն գործել է վանք:

Ախթալայի վանական համալիրի գլխավոր կառույցը **Սբ. Աստվածածին** եկեղեցին է: Այն որոշ հետազոտողների կարծիքով կառուցել է Իվանե Զաքարյանը: Ոմանք էլ գտնում են, որ այն կառուցված է եղել մինչև Իվանեին վանքն անցնելը, իսկ նա պարզապես հիմնովին վերակառուցել է եկեղեցին: Եկեղեցու շինարարության թվագրումը պարզելուն առաջիններին կողմնորոշում է Իվանե Զաքարյանի մահվան թվականը: Հստակ է, որ եկեղեցին կառուցված է եղել մինչև նրա մահը՝ 1227 թ.: Կիրակոս Գանձակեցու հիշատակությամբ Իվանեն մահանալուց հետո թաղվում է Պղնձահանքում իր շինած եկեղեցու դիմաց: Իսկ հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի Պղնձահանքին վերաբերող մի վկայությունից ելնելով էլ ենթադրվում է, որ 1216 թվականին Սբ. Աստվածածին եկեղեցին արդեն կառուցված է եղել: Այդ կարծիքի համար նպաստավոր է նաև եկեղեցու որմնանկարները հետազոտողների այն եզրակացությունը, ըստ որի դրանք հիմնականում արվել են 1205-1216 թթ. ընթացքում:

▲ *Սբ. Աստվածածին եկեղեցին հարավային կողմից*

▶ *Եկեղեցու հյուսիսային ճակատը*



Հայոց գրականության պետական գրադարան

A 92271

Հատվածներ որմնանկարներից

Եկեղեցու կառուցման ժամկետի վերաբերյալ արտահայտած այս կարծիքը սակայն խիստ պայմանական է, քանի որ դրա օգտին չի խոսում ոչ միայն վերոհիշյալ Մարիամ իշխանուհու թողած արձանագրությունը, այլ նաև եկեղեցու ներսում արված որմնանկարների այն շերտը, որը մասնագետների կարծիքով ավելի հին է, և չի կարելի թվագրել XIII դարով: Հետևաբար, եթե որմնանկարները թվագրվում են ավելի վաղ, քան XIII դ., ապա եկեղեցին մինչ այդ պետք է արդեն կառուցված լիներ: Այս ամենը ավելի հավանական է դարձնում այն կարծիքը, որ Իվանեն ոչ թե կառուցել է Սբ. Աստվածածին եկեղեցին, այլ քաղկեդոնական վանք հաստատելուց հետո, դավանաբանական նոր ուղղվածությունից ելնելով, այն հիմնովին վերակառուցումների է ենթարկել, որի ժամանակ էլ արվել է որմնանկարների հիմնական մասը: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ գրավոր աղբյուրներում *շինել* բառի տակ նկատի է առնվել վերակառուցումն ու հիմնավոր նորոգումը: Կարելի է ենթադրել, որ Իվանեի կողմից եկեղեցու շինելու մասին վկայությունը նույնպես այս իմաստով է կիրառվել:

Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսային շքամուտքի ճակատակալը

Որոշ մասնագետներ էլ անգամ կարծիք են հայտնել, որ եկեղեցին կառուցվել է X-XI դդ., իսկ Գանձակեցու վկայությունը վերաբերում է այլ կառույցի: Այս կարծիքը սակայն քիչ հավանական է համարվում: Ժողովրդական մի ավանդազրույցի հիման վրա էլ ենթադրություն է հայտնվել VII դարում Բյուզանդիայի Հերակլիոս I կայսեր կողմից եկեղեցու հիմնադրման մասին, որը սակայն չունի հիմնավոր ապացույցներ: Ապացույցներից զուրկ են նաև Գորգասալ թագավորի կողմից V դարում Ախթալայում եկեղեցու կառուցման մասին ենթադրությունները:

Հստակ է, որ XIII դարասկզբին Ախթալայի Սբ. Աստվածածին վանքն արդեն հայտնի և հեղինակավոր է եղել: Մի որոշ ժամանակ այստեղ է պահվել այնպիսի նշանավոր սրբություն, ինչպիսին Աստվածընկալ Սուրբ Խաչն է, որով ավանդության համաձայն Հովհաննես Մկրտիչը մկրտել է Հիսուսին: Այդ մասունքը Իվանե Զաքարյանը նվեր էր ստացել նշանավոր Պռոշ իշխանի հայր Վասակից, իսկ 1216 թվականին բավական մեծ վճարի դիմաց հանձնել է Նորավանքին:

Տեսարան հյուսիս-արևելյան կողմից





Սբ. Աստվածածին եկեղեցին և կից կառույցները հարավ-արևմուտքից

Բացի Սբ. Աստվածածին եկեղեցուց, XIII դարում Ախթալայի վանքում կառուցվել են նաև այլ շինություններ: Դրանցից առավել գեղազարդը Աբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին կից ուղղանկյուն հատակագծով կառույցն է: Այն հիմնվել է մինչև 1227 թ.: Սրան կից, գլխավոր եկեղեցու նույն ճակատի մնացած մասում կառուցվել է երկկամար, հյուսիսային կողմից միակամար բացվածքներով, զույգ երկթեք տանիքներով ծածկված սրահը: Գրավոր աղբյուրների վկայությամբ, Իվանե Զաքարյանը և նրա որդի Ավագը թաղված են այստեղ:

Մեկ այլ միաթեք ծածկով փոքրիկ կառույց էլ կից է գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին: Կարծիք կա, որ այն եկեղեցական արարողությունների համար անհրաժեշտ օժանդակ շինություն է եղել:

Վանքի հյուսիս-արևմտյան կողմում, մյուս շինություններից առանձին կանգնած է նաև երկթեք ծածկով մի եկեղեցի, որը, դատելով արևմտյան ճակատին պահպանված հետքերից ու դիմացի հիմքերի մնացորդներից, ունեցել է նաև կից կառույց:

Ամրոցի հյուսիս-արևմտյան կողմի միանավ եկեղեցին



Ախթալայում և նրա շրջակայքում կան հիմնականում XIII դարում կառուցված այլ պատմաճարտարապետական հուշարձաններ: Դրանցից հիշատակելի են հատկապես Սբ. Երրորդություն վանքը, Զույգ եկեղեցիները, Սբ. Գևորգ եկեղեցին, մատուռներ, խաչքարեր և ամրոցատիպ շինությունների մնացորդներ:

Բերդապարսպի մնացորդները և միջնադարյան մատուռներից մեկը

Սբ. Երրորդություն վանքը



Պատմական ժամանակաշրջանն ու իրադարձությունները

Ցանկացած հուշարձան, այդ թվում և Ախթալայի ամրոցն ու Սբ. Աստվածածին վանքը իր ժամանակաշրջանի ծնունդն են: Պատմական իրադարձությունները, ժամանակի ոգին, մտածողությունը կարևոր ազդեցություն են թողնում ոչ միայն մշակութային այս կամ այն արժեքի ստեղծման, այլ նաև դրա ձևի, ոճի, կատարողական հմտության ու մշակման առանձնահատկությունների վրա: Ախթալայի հուշարձանում պատմական ժամանակաշրջանի ազդեցությունը առավել քան նկատելի է: Հուշարձանի հիմնական բաղադրիչներից յուրաքանչյուրի՝ ամրոցի ու Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցումը կապված է հայոց պատմության համար առանցքային երկու իրադարձության հետ: Ամրոցը հիմնադրվել է Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանի պետականության վերականգնման, իսկ վանքը՝ Զաքարյան իշխանատոհմի առաջնորդությամբ սելջուկների տիրապետությունից երկրի զգալի հատվածի ազատագրման շրջանում: Մեզ չեն հասել տեղեկություններ, թե ի՞նչ դերակատարություն է ունեցել Ախթալայի ամրոցը Բագրատունիների և նրանց շառավիղը հանդիսացող Կյուրիկյանների օրոք: Բայց ակնհայտ է, որ դրա հիմնադրմանը նպաստել են IX դարավերջում և X դարում Հայաստանում ծավալված պատմական իրադարձությունները: Հայաստանն այդ շրջանում բուռն վերելք էր ապրում՝ արդեն 862 թ. ապագա Հայոց թագավոր Աշոտ Բագրատունին ճանաչվում է որպես Հայոց և Վրաց իշխանաց իշխան: 885 թ. Հայաստանը դառնում է ժամանակի համաշխարհային երկու հզոր տիրակալությունների՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի կողմից ճանաչված պետություն, իսկ Աշոտը ճանաչվում է թագավոր և դառնում Հայաստանում Բագրատունյաց

◄

Տեսարան ամրոցից

հարստության հիմնադիրը:

Բագրատունիները առավել հին և հզոր հայկական իշխանատոհմերից են: Արշակունիների թագավորության շրջանում նրանք իրենց դիրքով ու ազդեցությամբ Սյունիքի իշխաններից հետո երկրորդն են համարվել: 428 թ. պետականության կորստից հետո Բագրատունիները ժամանակ առ ժամանակ եղել են հայոց մարզպաններ կամ իշխանաց իշխաններ: VIII-IX դդ. Բագատունիները, ընդարձակելով իրենց տիրույթները, հաստատվում են նաև Վրաստանի մի շարք շրջաններում և IX դ. վերջին այստեղ նույնպես, հիմնադրելով անկախ թագավորություն, սկիզբ են դնում վրաց Բագրատունիների (Բագրատիոնի) արքայատոհմին: Վրաց Բագրատունիները, որի ականավոր ներկայացուցիչներն են Դավիթ Շինարարը (1089-1125 թթ.), Գեորգի III-ը (1156-1184 թթ.) և Թամար թագուհին (1184-1213 թթ.), սերում են արաբների դեմ 775 թ. հայերի մղած Արճեշի ճակատամարտի մասնակից, հայ իշխան Վասակ Բագրատունու որդի Ատրներսեհից ու թոռ Աշոտից: Տաշիրքի կամ ներկայիս Լոռու պատմամշակութային կյանքում Բագրատունիները հատուկ ներդրում ունեն: Նրանց օրոք հիմնվել են նշանավոր Լոռէ քաղաքը և բերդը, Տաշիր-Զորագետի թագավորությունը, կառուցվել են Սանահնի և Հաղբատի վանքերը:

XII դարի սկզբին, Կյուրիկյան թագավորության անկումից հետո Տաշիրքը հայտնվում է սելջուկ-թուրքերի տիրապետության տակ: Սակայն շատ կարճ ժամանակ անց տարածաշրջանը մտնում է Վրաստանի կազմի մեջ և տրվում Օրբելյան իշխանատոհմին: Իսկ արդեն 1180-ական թվականներից այստեղ հաստատվում են վրաց արքունիքում բարձրագույն պաշտոնները զբաղեցնող Զաքարյան իշխանները, որոնք վրացական աղբյուրներում հիշատակվում են իրենց *Երկայնաբազուկ* (Մխարգրձելի) պատվանունով: Հատկապես, ինչպես ժամանակի պատմիչներն են նշում, ազգով և հավատով հայ Սարգսի և նրա որդիներ Զաքարե ու Իվանե Զաքարյանների օրոք Հայաստանում կյանքն աշխուժանում է: Հայտնի է նաև, որ բանակի գերագույն հրամա-



Հուշարձանը բնակավայրից

նատարի՝ ամիրսպասալարի պաշտոնը երկար ժամանակ վարել են Զաքարյան և Մահկանաբերդի Արծրունի իշխանատոհմերը: 1190-ական թվականներից վրաց արքունիքում մեծ ազդեցություն են ձեռք բերում Զաքարե և Իվանե եղբայրները: Առաջինը զբաղեցնում է ամիրսպասալարի, իսկ երկրորդը՝ աթաբեկի պաշտոնը: Այդ հանգամանքը նպաստել է նաև Զաքարյանների շուրջ հայ ազնվականական տների համախմբմանը և, զինված ուժերի կենտրոնացման շնորհիվ,

Հայաստանի հյուսիս-արևելյան ու որոշ կենտրոնական նահանգների ազատագրմանը: Ազատագրված տարածքները սեփականության կամ տիրապետության իրավունքով տրվում են Զաքարյան իշխանատոհմին, որոնք էլ այստեղ ստեղծում են կիսանկախ իշխանապետություն, որի կենտրոնը հաստատվում է Հայաստանի նախկին մայրաքաղաք Անիում: Տաշիրքի մի մասը, Լոռէ քաղաքով դառնում է եղբայրներից Զաքարեի, իսկ մյուս մասը, որն իր մեջ ներառում է նաև Ախթալան՝ Իվանեի սեփականությունը: Քանի որ դավանաբանական խնդիրներին ժամանակին մեծ կարևորություն էր տրվում, Իվանեն հարում է հունադավան եկեղեցուն և Ախթալայի Հայ առաքելական դավանական ուղղվածության վանքը վեր է ածում հունադավան հայերի ու վրացիների հոգևոր կենտրոնի: Հատկանշական է, որ Զաքարյաններն ամեն գնով փորձում են իրենց ներկայացնել որպես Բագրատունի արքայատոհմի ժառանգներ, որպեսզի ամրագրեն իրենց ժառանգական սեփականության իրավունքները Հայոց Բագրատունիների տիրույթների նկատմամբ: Պատահական չէ, որ Զաքարե ամիրսպասալարը յուրացնում է նաև Բագրատունի արքաների «շահնշահ» և «տիեզերակալ» տիտղոսները: Հետաքրքիր է, որ վրաց աղբյուրներում հանդիպում է նաև հիշատակություն, ըստ որի Զաքարեն *նստած էր հայերի թագավորի տեղում*: Զաքարյանների օրոք Հայաստանն աննախադեպ մշակութային վերելք է ապրում: Շատ կարճ ժամանակում վերակառուցվում են հին վանքերը, կառուցվում են նորեր, զարգանում է գիտությունը, կրթությունը մատենագրությունը, երաժշտական արվեստը: Սրան նպաստում է նաև այն, որ բուն Հայաստանի տարածքում Զաքարյանների իշխանապետության ձևավորմանը զուգահեռ՝ 1196 թվականին Կիլիկիայի հայկական իշխանությունը հռչակվում է թագավորություն:

Պատմական կարճ ժամանակահատված տևած քաղաքական նպաստավոր պայմանները թույլ են տալիս հայ ժողովրդին ստեղծելու մշակութային այնպիսի հզոր ժառանգություն, որը դուրս գալով ազգայինի շրջանակներից, ստանում է համամարդկային կարևորություն: Ախթալայի վանքն

իր ճարտարապետությամբ, նրբաճաշակ զարդաքանդակներով ու որմնանկարներով այդ շրջանի հայկական մշակույթի լավագույն դրսևորումներից է:

Սակայն, 1220-ական թվականներից մշակութային և տնտեսական վերելքն ընդհատվում է մոնղոլական ավերիչ արշավանքներով: Այդ ժամանակ, հայ-վրացական զորքերը



Զարդաքանդակ դրվագներ

ղեկավարող Իվանեի որդին՝ Ավագ Զաքարյանը ստիպված է լինում հպատակություն հայտնել մոնղոլների առաջնորդ Չարմաղանին և պահպանել իր տիրույթներն ու հայ իշխանական տների նկատմամբ գերադաս դիրքը: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Ավագը նույնպես թաղվում է Ախթալայի վանքում հոր՝ Իվանեի կողքին: 1250 թ. Ավագի մահվանից հետո Զաքարյանների իշխանատոհմը աստիճանական անկում է ապրում:

Մոնղոլական տիրապետությունը Հայաստանում տևում է մինչեւ XIV դ. 30-40-ական թթ.: Դրան անմիջապես հաջորդում են Լենկթեմուրի արշավանքները: Զուգահեռաբար ակտի-

Կամարակապ սրահը

Լենկթեմուրի ժայռը

վանում են *ակ-կոյունլու* և *կարա-կոյունլու* թուրքմենական ցեղերի հարձակումները: Հատկապես խոր հետք են թողնում Լենկթեմուրի ասպատակությունները: Հետաքրքիր է, որ Ախթալայի մերձակայքում վանքից հյուսիս-արևելք գտնվող ժայռերից մեկը կոչվում է Լենկթեմուրի անունով: Ըստ տեղական ավանդազրույցի այդ ժայռի տակ է թաղվել Լենկթեմուրի կինը, ում հետ գերեզման են դրել նաև մեծաքանակ գանձեր ու ոսկի: Եվ որպեսզի դրանց տեղը չբացահայտվի, կնոջը թաղող զինվորներին Լենկթեմուրը հրամայում է սպանել:

Մեկ այլ ավանդազրույցի համաձայն, Լենկթեմուրի տղան այս վայրերում սիրահարվում է մի հայ աղջկա և, ցանկանալով մնալ նրա մոտ, հրաժարվում է հոր հետ շարունակել արշավանքները: Այնժամ հայրը ցասման մեջ անիծում է որդուն և արգելափակում ժայռում: Ժողովուրդը պատմում է, որ հնում ժամանակ առ ժամանակ այդ ժայռի ներսից ձայներ են լսվել, որոնք իբր Լենկթեմուրի տղայի աղաղակներն են:

XIV- XVIII դդ. վանքի մասին պահպանված գրավոր հիշատակություններ չկան: XVIII դարի վերջերից վանքը սպասարկել է նաև Ախթալայում բնակություն հաստատած

հույներին, որոնք Սբ. Աստվածածին վանքը *«Մեյրամանի»* կամ *«Մարիամ անայի վանք»* էին անվանում: XIX դ. վանքը անցնում է ծագումով հայ Մելիքովների (Մելիքիշվիլի) իշխանական ընտանիքին: Ներկայումս այն տեղացի հայերի սիրած սրբավայրերից և Հայաստանի արժեքավոր պատմաճարտարապետական հուշարձաններից մեկն է: Վանքն ունի նաև իր ուխտագնացության օրը՝ սեպտեմբերի 20-21-ը: Այս առիթով այստեղ այցելել են ոչ միայն հայերը, հույներն ու վրացիները, այլ հնում, հավատալով վանքի սրբազան ազդեցության ուժին, հանդիպել են նաև մահմեդականների այցելության դեպքեր:

Հարված Սբ. Աստվածածին եկեղեցու ներսից

Հունաստանի դեսպան Պանայոտա Մավրոմիխալին Ախթալայի վանքում (20.09.2006)







Համալիրը հյուսիս-արևմուտքից

Սբ. Աստվածածին եկեղեցին

Ճարտարապետությունը և որմնանկարները

Ախթալայի վանքի ճարտարապետական առանձնահատկությունը շեշտող գործոններից մեկը տեղանքի ընտրությունն է: Վանքի կառուցումը գոյություն ունեցող ամրոցի տարածքում նպատակահարմար էր ինչպես պաշտպանական տեսանկյունից, այնպես էլ՝ արդեն կառուցապատված տեղանքի օգտագործման: Այստեղ խորապես պահպանված է շինությունը բնական միջավայրին ներդաշնակ կառուցելու հայկական ճարտարապետությանը հատուկ բնապաշտական մոտեցումը: Չնայած ամրոցի չափերին և վանքի ազդեցիկությանը, այն մերված է շրջակա բնապատկերին:

Վանքի գլխավոր եկեղեցին ճարտարապետական

կառուցվածքի առումով միջանկյալ դիրք է գրավում եռանավ գմբեթավոր բազիլիկ և գմբեթավոր դահլիճ տիպերի միջև: Ընդարձակ աղոթասրահն արևելքից ավարտվում է կիսաշրջանաձև հատակագծով ու քաղկեդոնական եկեղեցիներին բնորոշ ցածր բեմ ունեցող Ավագ խորանով: Դրա աջ և ձախ կողմերում երկհարկ ավանդատներն են: Կառույցի ուղղահայաց առանցքը պսակված է եղել հզոր գմբեթով: Գմբեթակիր քառակուսին կազմող կամարները հենված են Ավագ խորանի անկյուններն ավարտող որմնամույթերի, իսկ արևմուտքից՝ առանձին կանգնած զույգ մույթերի վրա:

Եկեղեցու գլանաձև քարե թմբուկով և վեղարով գմբեթը չի

Եկեղեցու հերքին տեսքը

Եկեղեցու տեսքը հյուսիսից

Եկեղեցին և կից շինությունները հյուսիս-արևմուտքից

պահպանվել: Ավանդության համաձայն այն կործանել է Լենկ-թեմուրը, սակայն կարծիք կա նաև, որ այն քանդվել է 1784 թ. հյուսիսկովկասյան հրոսակ Օմար խանի ավարառությունների ժամանակ: Քանդված գմբեթի տեղում Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի հանձնարարությամբ XIX դ. կառուցվել է փայտից պատրաստված, թիթեղապատ, կիսագնդաձև գմբեթ, որը հետագայում փոխվել է: Խորհրդային իշխանության օրոք վերանորոգվել է եկեղեցու քարե ծածկը և փայտե հիմքով թիթեղապատ գմբեթը:

Ախթալայի վանքի գլխավոր եկեղեցու արտաքին

Հարված հարավային ճակատից

ծավալները հավասարակշռված են և պարզ: Բոլոր չորս ճակատների կենտրոնական մասերը շեշտված են եռամաս հորինվածքներով, որոնց ուղղահայաց առանցքները նշված են ռելիեֆային մեծ խաչերով: Սրանց աջ և ձախ կողմերում լուսամուտներ են տեղադրված: Լուսամուտները երիզված են հարուստ փորագրությամբ հյուսքաժապավենով:

Ճակատներից առավել ուշագրավը արևելյանն է: Արտա-

հայտչականության շեշտն այստեղ դրված է եռանկյունաձև հզոր ուղղաձիգ խորշերի վրա, որոնք ավելի են ընդգծում հորինվածքի սիմետրիկությունը: Սրանք պսակված են ցանցկեն պարակալներով: Յուրաքանչյուր խորշից դեպի Ավագ խորան բացված է փորագիր շրջանակով մեկական լուսամուտ, մեկն էլ տեղադրված է ճակատի կենտրոնական մասում:

Բացի գլխավոր՝ արևմտյան շքամուտքից եկեղեցին

Սբ. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատը և դրվագներ դրա հարդարանքից



Քանդակազարդ շրջանակներով կլոր լուսամուտները

մեկական մուտք ունի նաև հյուսիսային և հարավային կողմերից, որոնցից ձևավորմամբ առավել ուշագրավը հյուսիսայինն է: Զարդաքանդակների ընդհանուր ոճին ներդաշնակ է նաև փոքր, կլոր պատուհանների շրջանակների հարդարանքը, որոնցից ուշադրություն է գրավում հատկապես հարավային պատի արևելյան հատվածում վիշապներով զարդարված կլոր պատուհանը:

Գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին կից կառուցված է

Եկեղեցու հյուսիսային և հարավային շքամուտքերը



միաթեք ծածկով թաղակապ, փոքրիկ մի շինություն:

Իսկ արևմտյան ճակատի հարավային եզրով կանգնեցված է ուղղանկյուն հատակագծով, թաղածածկ, երկթեք տանիքով փոքր չափերի եկեղեցի: Կառույցը երկու մուտք ունի՝ արևմտյան և հյուսիսային կողմերից: Այն աչքի է ընկնում հարուստ արտաքին հարդարանքով: Ճակատները մշակված են կիսագլանաձև փունջ որմնամույթերի միջոցով կատարված դեկորատիվ ջլատումներով: Սրանք պսակված են եռագլուխ կամարներով: Որմնամույթերի խարիսխների և խոյակների, ինչպես նաև բացվածքների ձևավորումը համահունչ է վանքի գլխավոր կառույցի հարդարանքին: Եկեղեցու արտաքին հորինվածքում կարևոր դեր է խաղում անթերի ժապավենային հյուսքով կատարված քիվը:

Հետագայում Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան

Հարավային պատի լուսամուտներից մեկը

Փոքր եկեղեցու հարավային պատը

Եկեղեցու արևմտյան ճակատը

Արևմտյան ճակատի ընդհանուր տեսքը

ճակատի ազատ մասը լրացվել է կրկնակի երկթեք տանիքով կամարակապ սրահով: Սրահի հարդարանքում պահպանված է համալիրի ոճական ընդհանրությունը: Ինչպես գլխավոր և փոքր եկեղեցիներում, այստեղ նույնպես քանդակազարդված են քիվերն ու կամարակապ բացվածքները, իսկ դրանց ճակտոններին փորագրված են մեկական խաչեր:

Բոլոր այս կառույցներն աչքի են ընկնում շինարարական աշխատանքների ու զարդաքանդակների կատարողական բարձր մակարդակով:

Վանքի հյուսիս-արևմտյան կողմում առանձին կանգնած է ևս

Փոքր եկեղեցին և կից սրահը հարավ-արևմուտքից



Զարդաքանդակ դրվագներ

Տեսարան հյուսիս-արևմուտքից

◄

մի եկեղեցի: Այն երկթեք տանիքով, ուղղանկյուն հատակագծով մի կառույց է: Ունի ցածր բեմով կիսակլոր խորան, որտեղ երևում են որմնանկարների հետքեր: Կա ենթադրություն, որ եկեղեցու մոտից, ամրոցի պարսպի տակով գործել է դեպի գետը տանող գաղտնուղի:

Ամրոցի տարածքում պահպանվել են նաև բազմաթիվ կիսավեր բնակելի ու տնտեսական շինություններ: Դրանցից մեկը երկհարկանի կառույց է: Դրա վերաբերյալ մի հետաքրքիր ավանդազրույց կա, որ իբր այդտեղ է գտնվել վրաց թագավորի դրամահատարանը: Ըստ ավանդության վանքի տակ եղել է ստորերկրյա գաղտնասենյակների և ուղիների ցանց: Ամրոցի տարածքում եղել են նաև գինու մառաններ, ջրի պահեստավորման հորեր:

Հայտնի է, որ XIX դ. վանքում իրականացվել են որոշ կառուցապատումներ, սակայն այդ շրջանում կառուցված շինություններից ներկայումս ոչինչ չի պահպանվել:

►

Տիպական շինությունների ավերակները

Որմնանկարները

Հատված գլխավոր եկեղեցու հարավային պատի որմնանկարներից

Ախթալայի ճարտարապետական համակառույցի գեղարվեստական հարդարանքի կարևորագույն բնորոշիչներից են ներսույթի որմնանկարները: Դրանք ուսումնասիրողները գնահատում են որպես Բյուզանդիայից դուրս գտնվող քաղկեդոնական մշակույթի լավագույն նմուշներից մեկը: Որմնանկարների հիմնական մասն ունի հունարեն արձանագրություններ: Որմնանկարներն ունեն մի քանի շերտ: Դրանց հիմնական մասն արվել է Իվանե աթաբեկի կենդանության օրոք և նրա հովանավորությամբ, ամենայն հավանականությամբ 1205-1216 թվականներին: Մասնագետները գտնում են, որ Իվանեն ոչ միայն հովանավորել է, այլ նաև անմիջական մասնակցություն է ունեցել որմնանկարների թեմաների ընտրությանն ու իրականացման վերահսկմանը: Նման ենթադրության հիմք են տալիս այնպիսի թեմատիկ շեշտադրումները, որոնք առավելապես բնորոշ են հայկական հունադավան եկեղեցիների պատկերազարդումներին: Թվում է, թէ Իվանեի վրաց արքունիքում պաշտոնավարելու փաստը պետք է ազդեր որմնանկարչական դպրոցի ընտրության վրա: Սակայն, Ախթալայում վրացական դպրոցի դրսևորումները երկրորդական տեղ ունեն: Ըստ ընդունված կարծիքի Ախթալայի որմնանկարներում բյուզանդական դպրոցի ազդեցության հետ մեկտեղ վառ արտահայտություն են գտել հայկական քաղկեդոնական որմնանկարչական դպրոցի առանձնահատկությունները: Հատկանշական է, որ հայկական կերպարվեստի հետ են կապվում նաև եկեղեցու ավելի վաղ թվագրվող շերտի որմնանկարները: Հատկապես, սերտ զուգահեռներ են նկատվում XI դարի հայկական մանրանկարչության գլուխգործոցներից մեկի՝ «Մողնու ավետարանի» հետ: Ախթալայի որմնանկարչության, որպես հայ քաղկեդոնական կերպարվեստի նմուշ դիտարկելու ամենից ծանրակշիռ փաստարկները եկեղեցու Ավագ խորանի որմնանկարներն են: Դրանցում կիրառված գունային լուծումներն ավելի բնորոշ են բյուզանդական արվեստին, իսկ թեմատիկ լուծումները՝ հայկականին: Մասնագետների

կարծիքով Ավագ խորանի նկարիչը կրթությունը Բյուզանդիայում ստացած հայ է եղել: Այդ պատճառով որմնանկարների տեխնիկական կատարման մեջ առանձնացվում են բյուզանդական որմնակարչությանը բնորոշ մի շարք տարրեր, որոնք վրաց կերպարվեստում ի հայտ են գալիս միայն XIV դարի վերջերին: Որմնանկարչական դպրոցի պատկանելիության առումով առանձնակի նշանակություն ունի Ավագ խորանում *Հաղորդության* թեմայի պատկերումը: *Հաղորդության* տեսարանը Ավագ խորանում պատկերելու ավանդույթ վրաց միջավայրում չի եղել և XI-XIII դդ. ընթացքում նման դեպք հանդիպում է միայն մեկ եկեղեցում: Սակայն, այդ թեման ներկայացված է այդ ժամանակաշրջանում կառուցված հայկական բոլոր քաղկեդոնական ուղղվածության՝ Ախթալայի, Անիի Տիգրան Հոնենցի, Կիրանցի և Քոբայրի եկեղեցիների Ավագ խորաններում: Մեկ այլ փաստարկ է համարվում նաև

Դրվագներ Ախթալայի որմնանկարների պատճեներից (Հայաստանի ազգային պատկերասրահ)

Հարված հյուսիսային պատի որմնանկարից

Ավագ խորանում համաքրիստոնեական սրբերի շարքում սբ. Գրիգոր Լուսավորիչին կենտրոնական տեղում պատկերելը, ինչը բնորոշ է միայն հայկական ավանդույթին: Ընդունված է նաև այն կարծիքը, որ եկեղեցու պատերից յուրաքանչյուրի նկարազարդումն իրականացրել են տարբեր վարպետներ, որոնց գլխավորել է Ավագ խորանի նկարիչը:

Ընդհանրապես Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցու որմնանկարների գլխավոր առանձնահատկություններից է համարվում գունային պայծառ տոների և կոնտրաստների ընտրությը: Դրա հետ կապված նույնիսկ մի ավանդազրույց է հյուսվել, որ իբր արարողությունների ժամանակ մասնակիցները փոխանակ վանահորը լսելու, հմայված նայել են որմնանկարներին, ինչից էլ զայրացած վանահայրը հրամայել է կրով պատել դրանք:

Եկեղեցու որմնանկարներում պատկերված են հին և նոր

Հաղորդության տեսարանը Ավագ խորանում

կտակարանային թեմաներ ու տարբեր սրբեր:

Անշուշտ, կենտրոնական դեր ունեն Ավագ խորանի պատկերազարդումները, որտեղ գմբեթարդի վրա խոշոր պատկերով ներկայացված է Հիսուսին գրկած Տիրամայրը: Որմնանկարը խիստ վնասված է, և պահպանվել է դրա մի մասը միայն: Աստվածամոր պատկերից ներքև *Հաղորդության տեսարանն* է կամ *խորհրդավոր ընթրիքը*: Հիսուսը նկարված է երկու անգամ՝ դեպի աջ և ձախ թեքված դիրքերով: Ձախ դիրքում Փրկիչն առաքյալներին է բաժանում հաղորդության հացը, որպես իր աստվածային մարմնի խորհրդանիշ: Ձեռքում բռնած ափսեում հստակ նկատելի են երեք կլոր հացեր: Հիսուսի աջ թեքված դիրքով պատկերում նա գավաթով իր արյունը խորհրդանշող գինին է մատուցում առաքյալներին: Հորինվածքի կենտրոնում երկնային գահն է, որի վրա դրված են նույնպիսի, ինչպիսին Հիսուսի ձեռքին են, ափսեն և գինու գավաթը: Հիսուսից աջ և ձախ պատկերված են եղել վեցական առաքյալներ, որոնցից ներկայումս պահպանվել են չորսը: Ձախից՝ Պետրոսը և Հովհաննես ավետարանիչը, աջից՝ Պողոսը և Մատթեոսը: Փրկչի թիկունքում պատկերված են հրեշտակներ:

Հաղորդության տեսարանից ներքև, երկու շարքով

Սբ. Աստվածածին եկեղեցու Ավագ խորանի որմնանկարները

ներկայացված են համաքրիստոնեական սրբերը: Կենտրոնական պատուհանի խորշի աջ պատին Հռոմի Սեղբեստրոս պապն է, իսկ նրա դիմաց Տիրոջ եղբայրն է՝ սբ. Հակոբոս Ալփյան առաքյալը (Մարիամ Աստվածածնի քրոջ որդին): Այս շարքում հիշարժան են նաև սբ. Սեղբեստրոս պապից աջ սբ. Հովհան Ոսկեբերանի ու սբ. Հակոբից ձախ՝ սբ. Բարսեղ Մեծի պատկերները:

Ներքևի շարքում կենտրոնական դիրքում, պատի մեջ արված խորշից աջ սբ. Գրիգոր Լուսավորիչն է: Խորշից ձախ հերթականությամբ պատկերված են՝ սբ. Կլիմենտոս Հռոմեացին, սբ. Հակոբ Մծբնացին, սբ. Գրիգոր Սքանչելագործը, սբ. Կյուրեղ Ալեքսանդրացին և սբ. Եվսեբիոս Կեսարացին:

Զգալի հետաքրքրություն են ներկայացնում արևմտյան

Վերևում աջից Տեառնեղբայր սբ. Հակոբի պատկերն է, նրանից ձախ՝ սբ. Բարսեղ Մեծինը

Ձախ նկարում առաջինը պատկերված է սբ. Գրիգոր Լուսավորիչը. իսկ աջում՝ Հռոմի Սեղբեստրոս պապը

Արևմտյան պատի որմնանկարները

◀

▶

Հիսուսը փառքի աթոռին տեսարանը

պատի որմնանկարները: Պատի ստորին մասում դռան երկու կողմերում ամբողջ հասակով կանգնած սրբեր են: Դրանցից վերև պատկերված է *Երկնային թագավորությունը*: Որմնանկարի կենտրոնում Աստվածածինն է՝ հրեշտակներով շրջապատված: Աստվածածնից դեպի ձախ ողջ հասակով կանգնած Աբրահամն է, իսկ աջ՝ Հովհաննես Մկրտիչը: Ավելի աջ պատկերված է Երկնային թագավորության դուռը, իսկ բանալին ձեռքին, դեպի դուռը թեքվածը Պետրոս առաքյալն է: Այս տեսարանի վերևում պատուհանների խորշում նկարված են հրեշտակապետերը, իսկ պատի ամենավերևում, անմիջականորեն կամարի տակ *Հիսուսը փառքի աթոռին* թեման է, որտեղ գահին բազմած Քրիստոսն է, իսկ նրա ձախ կողմում պատկերված է Աստվածածինը:

Հետաքրքիր աստվածաշնչային թեմաներ են արտացոլված

նաև հյուսիսային և հարավային պատերին: Դրանց ստորին մասում սրբապատկերներ են, իսկ միջնամասում՝ թեմատիկ նկարներ: Հյուսիսային պատի կենտրոնական մասում, աջից ձախ, երեք առանձին դրվագներով ներկայացված են Քրիստոսի դատը հրեաների քահանայապետ Կայիափայի, այնուհետև Քրիստոսի դատը հռոմեական կուսակալ Պյուղատոսի մոտ և խաչելության երթը: Պատի վերնամասում Աստվածածնի պատկերագրության դրվագներ են: Ինչ վերաբերում է հարավային պատի որմնանկարներին, ապա այստեղ կենտրոնական թեման համբարձումից հետո Հիսուսի հայտնությունն է առաքյալներին :

Սրանք հիմնական որմնանկարներն են, որոնք 1979 թվին սկսված վերանորոգումից հետո առավել բարվոք տեսք են ձեռք բերել: Դրանցից բացի բազմաթիվ որմնանկարներ կան նաև կամարների, խորշերի, սյուների ու թաղերի վրա:

Հարավային պատի կենտրոնական դրվագը

Հոգևոր հայրերը և գործիչները

Ախթալայի վանքի հոգևոր հայրերից պահպանվել են մի քանիսի անունները: Դրանք մեզ են հասել շրջակայքի խաչքարերի և այլ շինությունների պատերին արված արձանագրություններից: Թե ո՞վ է եղել վանքի առաջնորդը Իվանե Զաքարյանի ժամանակ, հայտնի չէ: Բայց նրա որդու՝ Ավագի օրոք վանահոր անունը հայտնի է: Շրջակայքի տարբեր հուշարձաններից հայտնաբերված արձանագրություններից տեղեկանում ենք, որ վանքի առաջնորդն է եղել Պետրեն: Նույն արձանագրություններից պարզ է դառնում, որ նրա ժամանակակիցը Հաղբատի նշանավոր վանահայր, վանքի զանգակատունը կառուցող Համազասպն է եղել: Ելնելով արձանագրություններից՝ Պետրեն առաջնորդել է Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքում 1240-ական թվականներին, իսկ 1270-ականներին՝ Սիմեոն անունով վանահայրը:

Ախթալայի Սբ. Աստվածածին վանքում գործած հոգևոր հայրերից առավել նշանավորը թարգմանիչ և գրիչ Սիմեոն Պղնձահանեցին է: Նրա անունը մեզ է հասել իր իսկ թողած հիշատակարանների միջոցով, որոնցից տեղեկանում ենք, որ նա ծնվել է 1188 թ. և մինչև ծերություն եղել է Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքի կրոնավոր: Այստեղ նա զբաղվել է գրչությամբ, իրականացրել է հունադավան ուղղվածության աստվածաբանական գրականության թարգմանություններ: Հայտնի է նաև, որ նա ծանոթ է եղել և համագործակցել է հունադավան մեկ այլ հայ թարգմանչի՝ տրապիզոնցի Մինաս Սյունակյացի հետ:

1227 թ. Սիմեոն Պղնձահանեցին մեկ առանձին գրքով կազմել է Գրիգոր Նյուսացու գործերի ժողովածուն, որի հիշատակարանում կարդում ենք. «Յամին ՑՉԼԵ երորդի

յաւիտենից թուոյն (բյուզանդական թվագրումով 1227թ.) գրեցաւ և աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի. յ(ը)նդիր եւ լաւ աւրինակաց հնոց, որ թարգիմանչացն գրած էր. ձեռամբ մեղապարտ եւ անարժան կրաւնաւորի, Սիմէոնի. յերկիրս Հայոց մերձ ի Լաւռէ, ի վանքն որ կոչի՝ Սպլէնձահան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին. յիշխանութիւն Իվանէ աթաբագին, շինողի վանիցս. զոր յերկար ժամանակ արասցէ Տէր որդովքն իւրովք հանդերձ»:

Պղնձահանեցու գրական ժառանգության հիմնական մասը կազմում են թարգմանությունները: Նա հայերեն է թարգմանել Պրոկղ Դիոդոխոսի «Շաղկապք աստուածաբանականք», Հովհաննես Դամասկոսցու «Աղբիւր Գիտութեան», Հովհաննես Սինայեցու «Սանդուղք աստուածային ելից», «Պատմութիւն Վրաց» (Քարթլիս Ցխովրեբա) և «Ժամագիրք Յունաց» գրքերը: Այս թարգմանությունները իրենց արժանի տեղն ունեն հայ թարգմանչական գրականության մեջ: Սիմեոն Պղնձահանեցին գիտակցորեն է իրականացրել իր գործը, քանի որ, ինչպես ինքն է նշում, «ոչ էր սա թարքմանեալ ի մերս լեզու ... եւ ես յայն սակս թարքմանեցի, զի մի՝ պակաս եղիցի սա յազգէս մերմէ...»:

Սիմեոն Պղնձահանեցու գործունեությունը կարևոր է ոչ միայն այն առումով, որ նա հայ թարգմանչական գրականությանը ավելացրել է նոր գործեր, այլև դա ուղղակիորեն ապացուցում է, որ հայ քաղկեդոնականների հոգևոր կենտրոն Պղնձահանքի Սբ. Աստվածածին վանքում կարևոր տեղ է տրվել հենց հայերեն լեզվով կրոնական արարողությունների իրականացմանը, հակառակ դեպքում անիմաստ կլիներ «Ժամագիրք Յունաց»-ի թարգմանությունը:

Ախթալայի վանքն այսօր էլ պահպանում է իր

ազդեցիկությունը և ներշնչանքի աղբյուր ծառայում ժամանակակից մշակույթի համար: Հատկանշական է, որ XX դարի մեծանուն հայ կինոգործիչ Սերգեյ Փարաջանովն իր նշանավոր «Սայաթ Նովա» («Նռան գույնը») ֆիլմի նկարահանումների մի մասն իրականացրել է Ախթալայում: Այստեղ նկարահանվել են *«Սայաթ Նովայի մանկությունը»* և *«Գիժ մարտ»* դրվագները: Դրանցից մեկում՝ պարանից կախված լավաշների ֆոնին, եկեղեցում դրված հին թախտին նստած մոր և հոր հետ մանուկ Սայաթն է, իսկ մյուսում՝ նկատելի են եկեղեցու որմնանկարները:

Ախթալայի Սբ. Աստվածածին վանքը հայկական մշակույթում առանձնակի տեղ է զբաղեցնում, քանի որ այն մի յուրօրինակ երևույթի՝ հայ քաղկեդոնական մշակույթի լավագույն նմուշներից է: Հայ քաղկեդոնականները թողել են մշակութային մնայուն մի շերտ, որը ցավոք լավ չի լուսաբանված մինչ օրս, ինչի պատճառով մեծանում են այլոց կողմից մշակութային այս ստեղծագործությունները յուրացնելու կամ սեփականաշնորհելու նկրտումները: Վանքը չնայած կրում է քաղկեդոնական մշակույթի կենտրոն Բյուզանդիայի և դրա տարածաշրջանային ներկայացուցիչ վրաց եկեղեցու ազդեցությունը, սակայն առանձնանում է հայկական միջնադարյան մշակույթին բնորոշ շեշտված ինքնատիպությամբ:

Դրվագներ «Սայաթ Նովա» ֆիլմի նկարահանումներից (Սերգեյ Փարաջանովի թանգարանի ֆոնդերից)

Ժամանակագրություն

X դ. - Բագրատունի-Կյուրիկյանների կողմից Ախթալայի ամրոցի հիմնադրումը

1188 թ. - Կյուրիկե Բ արքայի դուստր Մարիամի թողած արձանագրությունը բնակավայրի մերձակայքում գտնված խաչքարի թիկունքին

XII դ. վերջ - ամրոցն անցնում է Իվանե Զաքարյանին

XIII դ. սկիզբ - Իվանե Զաքարյանը Ախթալայի Սբ. Աստվածածին վանքը Հայ առաքելականից վեր է ածում քաղկեդոնականի

XIII դ. սկիզբ - Իվանե Զաքարյանի կողմից վանքում վերակառուցումների իրականացումը

XIII դ. սկիզբ - փոքր եկեղեցու և սրահի կառուցումը վանքում

1205-1216 թթ. - Սբ. Աստվածածին եկեղեցու ներսույթի հարդարումը որմնանկարներով

1216 թ. - Ախթալայի Սբ. Աստվածածին վանքում պահվող Աստվածընկալ Սուրբ Խաչը հանձնվում է Նորավանքին

1220-1250-ական թթ. - Սիմեոն Պղնձահանեցու գործունեությունը Սբ. Աստվածածին վանքում

1227 թ. - Իվանե Զաքարյանի մահը և հուղարկավորությունը Սբ. Աստվածածին վանքում

1250 թ. - Իվանեի որդի Ավագի մահը և հուղարկավորությունը Սբ. Աստվածածին վանքում

1784 թ. - Օմար խանի ավարառու հարձակումները վանքի վրա

XIX դ. - Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի հրամանով վանքում վերանորոգումների իրականացումը

XIX դ. - վանքը դառնում է Մելիքով (Մելիքիշվիլի) իշխանական տան հանգստարանը

1979 թ. - Խորհրդային Հայաստանի օրոք վանքում վերանորոգումների իրականացման սկիզբը

Գրականության ցանկ

1. Ախթալա, Հայկական սովետական հանրագիտական, հ. 1, Երևան, 1974
2. *Ակինյան Ն.*, Սիմէոն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերենէ, Վիեննա, 1951
3. *Ավետիսյան Կ.*, Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցու որմնանկարների վերականգնումը, «Հուշարձան» տարեգիրք, գք. Բ, Երևան, 1993
4. *Եղիազարյան Հ.*, Ախթալայի վանքը և նրա հետ կապված մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1968, թիվ 7
5. *Եղիազարյան Հ.*, Ալավերդիի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1952
6. *Լալայան Ե.*, Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Երևան, 2004
7. *Կիրակոս Գանձակեցի*, Հայոց պատմություն, Երևան, 1982
8. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար (կազմեց Մաթևոսյան Ա.Ս.), Երևան, 1984
9. Հայ ժողովրդի պատմություն (պատասխանատու խմբագիր Առաքելյան Բ.Ն.), հ. 3, Երևան, 1976
10. *Հարությունյան Վ.*, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:
11. *Հր. Հակոբյան*, Հայոց տերունական սրբապատկերները, Երևան, 2003
12. *Մաթևոսյան Ռ.*, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, Պատմա-բանասիրական հանդես, 1968, թիվ 3
13. *Մարգարյան Հ.*, Զաքարյանների ծագումը, Պատմա-բանասիրական հանդես, 1994, թիվ 1-2
14. *Մեծին Վարդան Բարձրաբերդեցւոյ*, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861
15. *Մելիքսեթ-Բեկ Լ.*, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955
16. *Մուրադյան Պ.*, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977
17. *Շախկյան Գ.*, Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986
18. *Ոսկյան Հ.*, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960
19. *Ջալալյան Ա.*, *Քոթանջյան Ն.*, Ախթալայի Սբ. Աստվածածին վանքը, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
20. *Ջալալյանց Ս.*, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփխիս, 1842
21. *Ստեփանոս Օրբելյան*, Սյունիքի պատմություն, Երևան, 1986
22. *Аракелян М.*, Сергей Иосифович Параджанов, Ереван, 2006
23. *Дурново Л.*, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957
24. *Дурново Л.*, Очерки изобразительного искуства Средневековой Армении, Москва, 1979
25. *Ерицов Ал.*, Монастыр Ахтала, Кавказская старина, 1872, # 1.
26. *Епископ Кирион*, Ахтальский монастырь, Тбилиси, 2005
27. *Лидов А.*, Росписи Ахталы и искуство армян-халкедонитов, Из истории древнего мира и средневековья (сборник статей),
28. *Такайшвили Е.*, Грузинскія надписи Ахталы, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, кн. 29, отд. 1, Тифлись, 1901
29. *Lidov A.*, The mural painting of Akhtala, Moscow, 1991

/2000 գր./

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱԽԹԱԼԱ

Տեքստի հեղինակ՝ ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Լուսանկարները և ձևավորումը՝ ՎԱՀԱԳՆ ԱՄԻՐՅԱՆ

Մասնագիտական խմբագիրներ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՍԵՐՀԱԿ ԱՄԻՐՅԱՆ

Խմբագիր-սրբագրիչ՝ ԼԵՆԱ ՍԵՂԲՈՍՅԱՆ

Մասնագիտական խորհրդատվության համար շնորհակալություն ենք հայտնում
Փայտարվեստի թանգարանի տնօրեն՝
ճարտարապետ ՀԵՆՐԻԿ ՍՈԼԱԽՅԱՆԻՆ

Աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում.
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն՝
ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ
Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն՝
ՓԱՐԱՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ
Սերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրեն՝
ԶԱՎԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում նաև ծնունդով Ախթալացիներ
ՆՈՐԱՅՐ ԲԼՈՒԴՅԱՆԻՆ և ՍՎԵՏԼԱՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ

Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատանը

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220092271

Ա II 92271

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱԽԹԱԼԱ

Գիրքը նվիրված է միջնադարյան հայ մշակույթի նշանավոր կոթողներից մեկի Ախթալայի ամրոցի և վանական համալիրի պատմությանը, ճարտարապետությանը, որմնանկարչությանը և հայտնի հոգևոր հայրերի գործունեությանը:
Ուշագրավ է, որ մի որոշ ժամանակ այստեղ է պահվել Աստվածընկալ Սուրբ Խաչը, որով ավանդության համաձայն Հովհաննես Մկրտիչը մկրտել է Հիսուսին:
Հատկանշական է, որ XX դ. հայ մեծանուն կինոգործիչ Սերգեյ Փարաջանովը որմնակարներով հարուստ այս հուշարձանում է նկարահանել իր «Սայաթ Նովա» ֆիլմի որոշ դրվագներ:

ՎԱՌ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ